# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 փետրվարի 2017 թվականի N 22-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի մի խումբ բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Սարգիս Հակոբյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, Թամարա Դանիելյանին 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, Անահիտ Նիկողոսյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ, Օֆիկ Ասատրյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ և Համլետ Ստեփանյանին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

**2017 թվականի փետրվարի 15**
**ք. Հրազդան**

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզպետի
2017 թվականի փետրվարի 15-ի N 22-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Բնակավայր | Գումար | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Սարգիս Հակոբյան | ք. Հրազդան, Ա.Խաչատրյան փողոց, 23 շենք, 8 բնակարան | 50 000 | |
| 2 | Թամարա Դանիելյան | ք.Հրազդան, Միկրոշրջան, 109 շենք, 29 բնակարան | 50 000 | |
| 3 | Անահիտ Նիկողոսյան | ք. Հրազդան, Շահումյան փողոց, 1 նրբանցք, 18 բնակարան | 20 000 | |
| 4 | Օֆիկ Ասատրյան | ք.Հրազդան, Կենտրոն, 80 շենք, 5 բնակարան | 20 000 | |
| 5 | Համլետ Ստեփանյան | ք.Հրազդան, Միկրոշրջան, 202 շենք, 23 բնակարան | 40 000 | |